



DOI: 10.59560/18291155-2023.4-63

ԱԻԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության
Սահմանադրական դատարանի
Աշխատակազմի իրավախորհրդատրվական
վարչության փորձագիտական-վերլուծական
բաժնի պետ, ի.գ.թ.*



ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության
Սահմանադրական դատարանի
աշխատակազմի իրավախորհրդատրվական
վարչության փորձագիտական-վերլուծական
բաժնի առաջատար մասնագետ,
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի «Վարչական իրավունք և
դատավարություն» մագիստրոսական
ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի*

**ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՆ ՍՆԱՆԿ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ
ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ
ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԴԱՏԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը

կարճելու դեպքում պետական տուրքի վերադարձման անհնարինության խնդիրը՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության և սեփականության իրավունքների լույսի ներքո:

Սույն հետազոտության նպատակն է գործող իրավակարգավորումների համալիր ուսումնասիրության արդյունքում պարզել այն իրավական հիմքերը, որոնք թույլ կտան դատարանին՝ պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում հայցվորին մասնակի կամ լրիվ վերադարձնել արդեն իսկ վճարված պետական տուրքը, իսկ վճարված չլինելու դեպքում՝ լուծել սույն հարցը:

Ուսումնասիրության արդյունքում հեղինակների կողմից անդրադարձ է կատարվում պետական տուրքի գանձման ինստիտուտի և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցության հարցին, պետական տուրքի գանձման նպատակներին, պետական տուրքի վերադարձման խնդրին՝ սեփականության իրավունքի, ինչպես նաև դատական ծախսերի բաշխման հարցին՝ սնանկության վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո:

Հիմնաբառեր. պետական տուրք, սնանկության վարույթ, սեփականության իրավունք, դատարանի մատչելիություն, պետական տուրքի վերադարձ:

1. Դատարանի մատչելիության իրավունքի և պետական տուրքի գանձման ինստիտուտի հարաբերակցությունը

1.1. Ընդհանուր դրույթներ: Դատարանի մատչելիությունն ինստիտուցիոնալ և վարութային երաշխիքների ամբողջություն է, որոնք կոչված են երաշխավորելու անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ կենսագործումը: Այս իրավունքը կարելի է դիտարկել լայն և նեղ իմաստներով: Դատարանի մատչելիության իրավունքը լայն իմաստով ենթադրում է յուրաքանչյուրի համար դատարան դիմելու հավասարապես երաշխավորվող հնարավորություն: «Այս իմաստով դատարանի մատչելիության իրավունքը կարող է սահմանվել որպես ցանկացած շահագրգիռ անձի հավասար հնարավորություն՝ անարգել դիմելու

դատական և արդարադատություն իրականացնող այլ մեխանիզմներին և մասնակցելու վեճի քննությանը դրա բոլոր փուլերում»¹:

Նեղ հմաստով՝ դատարանի մատչելիության իրավունքը վերաբերում է դատական պաշտպանության իրավունքի իրացմանն ուղղված ընթացակարգային երաշխիքներին: Այլ խոսքով՝ դատարանի մատչելիության իրավունքի էությունը հանգում է դատարանում գործի քննության համար պետության կողմից ցանկացած չարդարացված ընթացակարգային խոչընդոտների սահմանման անթույլատրելիությանը:

Դատարանի մատչելիության իրավունքը պետք է դիտարկել որպես արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի *երաշխավորման միջոց*, որն իրացվում է միջնորդավորված՝ օրենսդրորեն սահմանված ընթացակարգերի առկայությամբ (այդ թվում նաև՝ դատարան դիմելիս պետական տուրքի վճարման պարտականության սահմանմամբ):

Դատարանի մատչելիության իրավունքն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ենթակա է սահմանափակման: Այն կարող է ենթարկվել անուղղակի սահմանափակումների, մասնավորապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ² (օրինակ՝ դատարան բողոք ներկայացնելիս պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի սահմանումը):

Այսպիսով՝ դատարանի մատչելիությունն արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մաս է՝ կապված դատական պաշտպանության իրավունքի իրացման հետ՝ ինչպես դատարան դիմելիս, այնպես էլ դատավարության ընթացքում: Այս համատեքստում փաստում ենք, որ *դատավարական որևէ առանձնահատկություն, այդ թվում նաև՝ պարասիսանողի՝ մեկ այլ վարույթով սնանկ ճանաչվելը չպետք է հիմք հանդիսանա, որպեսզի պետությունը՝ միայն օրենքի «ծնական պահանջները» պահպանելու նպատակով անհամաչափ միջամտություն*

¹ **Корпен А.С.** К вопросу о содержании права на доступ к правосудию // Право. Журнал Высшей школы экономики. 2016. №2. - С. 9. Հղումը ստորև՝

<https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-soderzhanii-prava-na-dostup-k-pravosudiyu>

² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Mamikonyan v. Armenia, Application no. 25083/05, 16.03.2010, Scholz AG v. Armenia, Application no. 16528/10, 24.01.2019:

իրականացնի անձի դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ՝ խեղաթյուրելով և՛ դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը, և՛ դատարաններում պետական տուրքի գանձման ինստիտուտի սահմանադրահրավական բովանդակությունը:

1.2. Պետական տուրքի գանձման նպատակները: Դատարանի մատչելիության իրավունքի հետ սերտ փոխկապակցված է պետական տուրքի ինստիտուտը: Պետական տուրքի գանձման հիմքում ընկած է հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց (պետության) կողմից որոշակի «ծառայությունների մատուցման» դիմաց համապատասխան «փոխհատուցում» ստանալու գաղափարը: Այլ կերպ ասած՝ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն պետական տուրք վճարած անձի օգտին կատարելու վերջինիս կողմից հայցվող որոշակի գործողություններ: Բացառություն չի կազմում նաև արդարադատության իրականացման գործառույթին ուղղված՝ պետության կողմից իրականացվող գործողությունների (մատուցվող ծառայություններ) դիմաց որոշակի դրամական արտահայտությամբ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումին, ի թիվս այլ փաստաթղթերի, կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը: Հետևապես, որպես ընդհանուր կանոն, պետական տուրք վճարելը քաղաքացիական դատավարության մեկնարկին նախորդող իմպերատիվ նախապայման է, իսկ բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմում ներկայացրած անձի կողմից չի ներկայացվում օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 4(112)2023

հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը, դատարանն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերադարձնում է հայցադիմումը:

Վերոգրյալից հետևում է, որ պետական տուրքը դատարանի լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, ինչպես նաև համապատասխան գործողությունների կատարման համար գործին մասնակցող անձանցից գանձվող պարտադիր վճար է: Այլ կերպ ասած՝ *պետական տուրքը կոնկրետ գործի շրջանակներում ծագած և գործի քննության հետ կապված ծախս է, որն ընդգրկվում է դատական ծախսերի մեջ:*

Այսպիսով՝ պետական տուրքի վճարումն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման նախապայման է, և որպես հետևանք չի հանգեցնում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման: Դատարան դիմելիս պետական տուրքի վճարումը հանդես է գալիս որպես *անձի դատավարական պարտականություն*, և դրա պարտադիրությունը կապված է լոկ պետության կողմից համապատասխան «ծառայության» դիմաց որոշակի փոխհատուցում տրամադրելու, ինչպես նաև դատարան դիմելու իրավունքի «շահարկումները» կանխելու նպատակների հետ:

1.3. Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի դիրքորոշումները:

(a) Պետական տուրք վճարելու պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցության հարցին իր մի շարք որոշումներում անդրադարձ է կատարել Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշման¹ շրջանակներում անդրադառնալով

¹ Քաղաքացիներ Արարատ Ծովյանի և Սվետլանա Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

պետական տուրքեր վճարելու պարտականությանը, նշված սահմանադրական պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցությանը, պետական տուրքի բովանդակությանը, դերին ու նշանակությանը, նշել է.

«Դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը»:

(...)

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պարզաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ»:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎ 4(112)2023

Մեկ այլ՝ 2018 թվականի հուլիսի 10-ի ՍԴՈ-1423 որոշմամբ¹ Սահմանադրական դատարանը, ելնելով պետական տուրքի՝ օրենքով որոշված իրավական բովանդակությունից և նպատակային նշանակությունից, նշել է.

«(...) պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականիել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը»:

(b) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետայսու՝ ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ՄԻԵԴ-ը ևս չի բացառում հնարավորությունն առ այն, որ արդարադատության իրականացման շահերի նպատակով անձի նկատմամբ դատարան «մուտք գործելու» համար ֆինանսական սահմանափակում դնելը կարող է արդարացվել, հետևաբար՝ դատարանը գտել է, որ քաղաքացիական տուրքեր վճարելու պահանջը չի կարող դիտվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին անհամատեղելի է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ: Այնուամենայնիվ, դատարանը վերահաստատել է, որ վճարի չափը, որը գնահատվում է կոնկրետ գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո, ներառյալ՝ դիմումատուի՝ դրանք վճարելու կարողությունը, և դատավարության փուլը, որով սահմանվել է այդ սահմանափակումը, էական գործոններ են որոշելու, թե արդյո՞ք անձն օգտվում է դատարանի մատչելիության իր իրավունքից, թե՛ ոչ, և արդյո՞ք

¹ Կարեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

իր գործը լավել է դատարանի առջև (*Կրե'ս Kreuz v. Poland, Application no. 28249/95, 19.06.2001, §59-60, Karahasanoglu v. Turkey, Application no. 21392/08, 16.03.2021, FINAL 16.06.2021, §34, Stankov v. Bulgaria, Application no. 68490/01, 12.07.2007, FINAL 12.10.2007, §52*):

Պետական տուրքի գանձման վերաբերյալ Սահմանադրական դատարանի, ինչպես նաև ՄԻԵԴ-ի վերոնշյալ դիրքորոշումները վկայում են առ այն, որ *օրենսդրի կողմից հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց (պետության) մատուցած «ծառայությունների», այդ թվում նաև՝ արդարադատության իրականացման դիմաց, անհատից պարտադիր գանձման ենթակա պետական տուրքի որոշակի դրույքաչափի սահմանումը՝ այնքանով, որքանով չի խոչընդոտում անձի դատարանի մարզեցիության իրավունքին, թույլատրելի և, նույնիսկ, անհրաժեշտ միջոց է:*

2. Պետական տուրքի վերադարձը՝ սեփականության իրավունքի լույսի ներքո

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է անձի սեփականության իրավունքը: Միաժամանակ, Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասից բխում է, որ սահմանադիրն օրենսդրի իրավասությանն է վերապահել իր իսկ հայեցողությամբ սահմանել հարկեր, տուրքեր, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու հիմքերը և կարգը: Ընդ որում՝ հարկեր, տուրքեր, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումների տեսքով սեփականության իրավունքին միջամտությունն իրականացվում է ոչ թե կամայական՝ այլ բացառապես որոշակի լեգիտիմ նպատակի ապահովման նկատառումներից ելնելով: Այսպիսով՝ անձի սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն, այդ թվում նաև՝ անձի վրա պետական տուրքի վճարման պարտականություն դնելը, պետք է կատարվի բացառապես այն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ 4(112)2023 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Այս առնչությամբ հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը ևս, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար¹:

Սեփականության իրավունքի իրացման իմպերատիվ պայմաններից է անձի հայեցողությունը՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավազորությունների հարցում: Այսինքն, որպես ընդհանուր կանոն, սեփականության տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը պետք է իրականացվի բացառապես սեփականատիրոջ հստակ կամաարտահայտության պայմաններում: *Այնուամենայնիվ, այս ընդհանուր կանոնից բացառություն է պետության կողմից հարկեր, փոստեր, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումների սահմանումը, որոնց պարագայում անձի ազատ կամաարտահայտության առկայությունը չի հանդիսանում սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, ուստի սեփականատիրոջ կամքն առաջնային չէ:*

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հարցին, իր 30.01.2013 թվականի ՍԴՈ-1073 որոշմամբ² արձանագրել է հետևյալը.

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Beyerle v. Italy, Application no. 33202/96, 05.01.2000; Sporröng and Lonnroth v. Sweden, Application no. 7151/75; 7152/75, 23.09.1982:

² ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

«Այսպիսով, արձանագրելով, մի դեպքում՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրանց կիրառման օրենսդրական շրջանակները, մյուս դեպքում՝ օրենքով սահմանված հարկեր մուծելու՝ անձի սահմանադրական պարտականության կատարման անխուսափելիությունը, սահմանադրական դատարանը կարևորում է վերջինիս իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձևերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չենթարկվի անիրավաչափ (անհամաչափ) սահմանափակման, իսկ օրենքով նախատեսված սահմանափակումները հետապնդեն սահմանադրորեն արդարացված նպատակ և որևէ կերպ չգերազանցեն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները»:

Այսպիսով՝ թե՛ Սահմանադրությամբ, թե՛ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով սեփականության իրավունքի պաշտպանություն նախատեսելու հետ միաժամանակ նախատեսվել է նաև օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարումների կատարման պարտականությունը՝ որպես նման պարտականության նախատեսման պարտադիր նախապայման դիտարկելով որոշակի լեգիտիմ նպատակի հետապնդումը: Ուստի՝ սեփականության իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում, **այդ թվում՝ պետական տուրքի սահմանումը, պետք է տեղի ունենա բացառապես օրենքի հիման վրա, համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, իսկ այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և ունենա արդարացի հիմնավորում:**

ՄԻԵԴ-ի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով **գույք է համարվում ոչ**

ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 4(112)2023
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեզվատիմ ակնկալիքը¹:

Լեզվատիմ ակնկալիքն առաջանում է այն պարագայում, երբ անձն իր սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հիմքում դնում է ոչ թե կոնկրետ իրավունքը, այլ այդ իրավունքի իրացման իրական սպասման (ակնկալիքի) համար հիմք հանդիսացած հանգամանքը (փաստը)²:

Սույն ուսումնասիրության խնդրո առարկան կոնկրետ քաղաքացիական գործով պատասխանողի՝ սնանկության վարույթի շրջանակներում սնանկ ճանաչվելու դեպքում տվյալ քաղաքացիական գործի վարույթի կարճման պայմաններում վճարված պետական տուրքի վերադարձվելիության խնդիրն է: Տվյալ պարագայում քաղաքացիական գործով հայցվորն իր դատական պաշտպանության և սեփականության իրավունքների իրացման/պաշտպանության պահանջի հիմքում դնում է այն փաստը, որ տվյալ քաղաքացիական գործով պատասխանողը մեկ այլ վարույթով ճանաչվել է սնանկ, ինչի արդյունքում տվյալ քաղաքացիական գործի վարույթը կարճվում է (այսինքն՝ հայցվորը զրկվում է դատական պաշտպա-

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Trgo v. Croatia, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom, Application no. 44302/02, 30.08.2007, Saghinadze and others v. Georgia, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010:

² Սահմանադրական դատարանն իր՝ 01.12.2015 թվականի ՍԴՈ-1238 որոշման շրջանակներում նշել է հետևյալը.

«Դիմողը, փաստորեն, ձեռք է բերել ... սեփականության իրավունքի օրինական ակնկալիք, ինչի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009 թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44) գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեզվատիմ ակնկալիքը»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը վկայակոչված է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-902 որոշման մեջ: Իսկ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում Սահմանադրական դատարանը փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզվատիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

նությունից), ուստի՝ վերջինս ձեռք է բերում իր կողմից արդեն իսկ վճարված պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման օրինական ակնկալիք: Այսինքն՝ **լեգիտիմ ակնկալիքի հիմքը պետության կողմից «չմատուցված ծառայությունն» է:**

Սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքն անձի մոտ ծագում է երկու դեպքում, երբ՝

(1) անձի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է,

(2) անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Երկրորդ հիմքի համատեքստում հարկ է պարզել, թե *ե՞րբ է անձի մոտ առաջանում պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման օրինական ակնկալիք:*

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 38-րդ հոդվածը, ի թիվս այլ հիմքերի, «գ» կետով նախատեսում է պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման իրավական հնարավորություն՝ **տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:**

Փաստացի ստացվում է, որ այն պահից սկսած, երբ կոնկրետ քաղաքացիական գործի վարույթը կարճվում է՝ գործը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, անձի մոտ առաջանում է *պետական տուրքի՝ որպես սեփականության ձևի վերադարձման օրինական ակնկալիք:*

Ողջ վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ այն պարագայում, երբ անձի կողմից արդեն իսկ վճարված պետական տուրքի դիմաց վերջինիս չի մատուցվել այն ծառայությունը, որի համար գանձվել է համապատասխան դրույքաչափի պետական տուրք (ընդ որում՝ **ծառայություն մատուցված չլինելը կախված չի եղել կողմի կամքից, ավելին՝ վերջինիս կողմից օբյեկտիվորեն չէր էլ կարող կանխատեսվել, որ պարտադրող մեկ այլ գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով կարող է**

ճանաչվել սնանկ, և այդ հիմքով գործի վարույթը կարող է կարճվել)
 պետական տուրքի պահումը պետական բյուջեում հանգեցնում է անձի սեփականության իրավունքի, այն է՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի անհամաչափ միջամտության (սահմանափակման):

3. Դատական ծախսերի բաշխման հարցը¹՝ սնանկության վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո

(ա) Պետական տուրքի վճարման պարտականությունը՝ դատական ծախսերի բաշխման համատեքստում: Օրենսգրքի 110-րդ հոդվածը կարգավորում է դատական ծախսերի բաշխումը՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում: Հիշատակված հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, *բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:* Վերոնշյալ հոդվածի 2-4-րդ մասերում նախանշված են վերոգրյալ բացառությունները, որոնք, սակայն, չեն անդրադառնում պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի բաշխման հարցին:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 103-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքը վերադարձնելու կարգավորումները՝ նույն հոդվածի 1-ին մասով ամրագրելով, որ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերը և կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, իսկ 2-րդ մասով ամրագրում է, որ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը պարտավոր է դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացող հանգամանքները:

Օրենքի համալիր ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ օրենսդրի կողմից փորձ է արվել պահպանել ողջամիտ հավասարակշռություն, մի կողմից՝ դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինական շահի, դատարաններում պետական տուրք

¹ Սույն գլխում դատական ծախսերի բաշխման հարցը քննարկվում է առավելապես պետական տուրքի վճարման պարտականության համատեքստում:

վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ անձի օրինական շահի միջև, սահմանելով որոշակի իրավական երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատարանի մատչելիության, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները:

Մի կողմից՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովմանն է միտված դատարաններում պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելը, այն է՝ Օրենքում որոշակիացված դեպքերում անձանց՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելը (*մինչդարավարական երաշխիք*): Մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ պետական տուրքի գանձման հիմնական նպատակը պետության կողմից մատուցված «ծառայության» դիմաց որոշակի փոխհատուցումն է՝ օրենսդրի կողմից նախատեսվել է արդեն իսկ վճարված պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման ինստիտուտը, որը կոչված է ապահովելու անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը (*հետդարավարական երաշխիք*): Այսինքն՝ **բոլոր այն դեպքերում, երբ անձը պետությունից հայցում է իր ենթադրյալ խախտված իրավունքի դատական պաշտպանություն և դրա դիմաց վճարում է պարտադիր վճարման ենթակա պետական տուրք, սակայն դրա դիմաց չի ստանում իր ենթադրյալ խախտված իրավունքի արդյունավետ դատական պաշտպանություն (այն է՝ փաստացի վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը չի իրացվում), պետությունը պարտավորվում է վերադարձնել արդեն իսկ վճարված պետական տուրքի գումարը:** Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է այն պարզ տրամաբանությամբ, որ պետությունը՝ ի դեմս դատարանի, գործն ըստ էության չքննելով, չի կրում արդարադատության իրականացման հետ կապված որևիցե էական ծախս, ուստի՝ դրա դիմաց արդեն իսկ վճարված պետական տուրքը չվերադարձնելը չի արդարացնում պետական տուրքի գանձման ինստիտուտի սահմանադրաիրավական նպատակները և նշանակությունը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 4(112)2023

Սահմանադրական դատարանը, իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 5-ի ՍԴԱՌ-99 աշխատակարգային որոշմամբ¹ անդրադառնալով գործի քննության ընթացքում պատասխանողի սնանկ ճանաչվելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորության հարցին, արդարացիորեն նշել է.

«(...) Օրենքը, հանդիսանալով պետական տուրքի հետ կապված հարցերի ընդհանուր կանոնակարգումները սահմանող նորմատիվ իրավական ակտ, նախատեսում է պետական տուրքի լրիվ կամ մասնակի վերադարձման ընդհանուր հիմքերը, այդ թվում՝ գործը դադարանում քննության ենթակա չլինելու դեպքում տվյալ գործով վարույթի կարճման հիմքը (1-ին մասի «գ» կետ): Օրենքի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ պետական տուրքը ենթակա է լրիվ կամ մասնակի վերադարձման բոլոր այն դեպքերում, երբ գործն օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում ենթակա չէ դադարանում քննության: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի սույն նորմով կանոնակարգված են գործի՝ դադարանում քննության ենթակա չլինելու դեպքերը ցանկացած դատավարության համար: Այսինքն՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում գործածված «գործը ենթակա չէ դադարանում քննության» ձևակերպումը բովանդակային առումով ենթակա է լայն մեկնաբանման՝ ներառելով գործի քննության անհնարինության դեպքերը համապատասխան դադարանում՝ անկախ դատավարության տեսակից:

Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են քաղաքացիական դատավարության շրջանակներում գործի վարույթը կարճելու

¹ «ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում գործի քննության ընթացքում պատասխանողի սնանկ ճանաչվելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորություն, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

հիմքերը: Օրենսգրքի հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ առաջին արյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարծում է գործի վարույթը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով: Միաժամանակ, Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված է, որ առաջին արյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարծում է գործի վարույթն օրենքով նախատեսված այլ դեպքերում: Փաստորեն, օրենսդիրը, Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ էության, սահմանելով գործի վարույթը կարճելու իմպերատիվ հիմքերի սպառիչ ցանկ (1-11-րդ կետեր), միաժամանակ նախատեսել/սահմանել է բաց թվարկում (12-րդ կետ), ինչը ենթադրում է, որ օրենսդրի կողմից կարող են ընդունվել հատուկ կարգավորումներ սահմանող այլ օրենքներ, որոնք կնախատեսեն (Օրենսգրքում նշվածներից զատ) գործի վարույթը կարճելու այլ հիմքեր»:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱԿ 4(112)2023

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո հարկ ենք համարում ընդգծել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքից զատ, հատուկ կարգավորումներ սահմանում են նաև «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը (18-րդ հոդվածի 2-րդ մաս) և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքը (29-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետ):

Այսպես՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի վերաբերյալ առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, որը չի վիճարկվել սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետում, պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, *իսկ եթե հայցադիմումն ընդունվել է՝ կարճել գործի վարույթը*: Իսկ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերու-

թյունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ դատարանի կողմից Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից *դատարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որտեղ բանկը ճանաչվել է պատասխանող*, ինչպես նաև կասեցվում են բանկի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանների, արբիտրաժային տրիբունալների վճիռների, որոշումների կատարողական վարույթները: Սույն կետով սահմանված՝ կասեցված կամ կարճված վարույթների հետ կապված պահանջները պարտատերերը կարող են ներկայացնել լուծարային կառավարչին՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Վերոնշյալ իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ **առանձին՝ այլ (հատուկ) օրենքով նախատեսված** գործի կարճման հիմք, որպես այդպիսին, սահմանվում է միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով, մինչդեռ թե՛ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը, թե՛ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, թեև նախատեսում են առանձին՝ Օրենսգրքի նկատմամբ հատուկ հանդիսացող օրենքներով նախատեսված հիմքեր (ինչի արդյունքում էլ առաջանում է խնդրո առարկա վեճը), այնուամենայնիվ, **բովանդակային առումով վերջիններս անուղղակի կերպով նախատեսում են կոնկրետ դատարանում գործի քննության անհնարինության հիմք:**

Այսպիսով, ստացվում է, որ իրավակիրառական պրակտիկայում գոյացած խնդիրն ունի արհեստաձին բնույթ, քանի որ վերջինս կարող է լուծվել բացառապես դատական մեկնաբանման միջոցով, այնինչ դատարանները դեռևս չեն դրսևորում բավարար հաստատակամություն և պատրաստակամ չեն օրենքներում օգտագործվող ձևակերպումներին տալ լայն՝ տառացի նշանակության սահմաններից դուրս մեկնաբանում, մինչդեռ, ինչպես արդարացիորեն նշել է Սահմանադրական դատարանն իր՝ 2021

թվականի ապրիլի 8-ի ՍԴԱՈ-74 աշխատակարգային որոշմամբ¹ «(...) *Օրենքի, վերջինիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավազորությունը սահմանադրորեն վերապահված է եռաստիճան դատական համակարգին*»: Ցանկացած նման խնդրի առկայության պարագայում դատարանները, դատական մեկնաբանման լայն գործիքակազմի օգտագործմամբ, պետք է փորձեն համապատասխանեցնել օրենքի տառն օրենքի ոգուն, օրենսդրի կամքին, քանի որ անհնարին է պատկերացնել իրավական նորմի կիրառումն առանց վերջինիս մեկնաբանման՝ իրավունքի իրական բովանդակության բացահայտման: Ավելին՝ դատարանները դատական մեկնաբանումն իրականացնում են ոչ թե կամայական, այլ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեկնաբանման կանոններին (եղանակներին) համապատասխան, ընդ որում՝ մեկնաբանման կանոնները (եղանակները) սպառիչ չեն և չեն բացառում մեկնաբանման այլ՝ կոնկրետ նորմի իմաստը/ օրենսդրի կամքը վերհանելուն ուղղված դոկտրինալ եղանակների օգտագործումը:

(b) Պետական տուրքի վերադարձման անհնարինությունը՝ սնանկության վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից ***կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը***, և պարտապանի դեմ պարտատերերի ***պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում***¹ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:

Թե՛ Վճռաբեկ դատարանը, թե՛ Սահմանադրական դատարանն իրենց նախկինում կայացրած որոշումներում բազմիցս նշել են, որ

¹ «ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի ուժով սնանկության վարույթն ունի առանցքային առանձնահատկություն¹, այն է՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը: Ընդ որում՝ հիշատակված հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության:

Նման կարգավորման հիմքում օրենսդիրը դրել է այն ողջամիտ տրամաբանությունը, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունները պետք է մեկտեղվեն սնանկության վարույթում: Օրենսդրի որդեգրած նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում երաշխավորելու բոլոր պարտատերերի շահերը՝ օրենքով սահմանված առաջնահերթությամբ վերջիններիս պահանջները բավարարելու նպատակով:

2023 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ ՍԴԱՌ-99 աշխատակարգային որոշմամբ² Սահմանադրական դատարանն արձանագրել է.

¹ Սնանկության ինստիտուտի էությունը բացահայտվում է դրա հետապնդած նպատակների միջոցով: Թեև օրենսդիրը սնանկության ինստիտուտի նպատակներն ուղղակիորեն չի ամրագրել, սակայն Օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ սնանկության ինստիտուտի նպատակը, նախևառաջ, անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող անձի ֆինանսական առողջացումն է, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության լուծարումը/ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը և նրա գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարումը (այս մասին տե՛ս Մարկոսյան Ս.Ա. Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում. Գիտագործնական ձեռնարկ. ք. Երևան, Արդարադատության ակադեմիա, 2022):

² «ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում գործի քննության ընթացքում

«Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն սահմանում է տվյալ գործի՝ **դատարանում քննության անհնարինության հիմք**, ինչը ենթադրում է նման գործերի քննության անհնարինություն ինչպես քաղաքացիական և վարչական դատավարության կարգով, այնպես էլ արբիտրաժային կարգով:

(...)

Վերոգրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետն ինքնին նախատեսում է գործի քննության ընթացքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորություն այն դեպքում, երբ գործի վարույթը կարճվում է, ենթակա չէ քննության համապատասխան դատարանում (տվյալ վարույթի/դատավարության շրջանակներում), այն է՝ այն դատարանում, որի վարույթում տվյալ պահին գտնվում է տվյալ գործը, ինչը, սակայն, չի բացառում այդ գործի քննությունն այլ դատարանում (տվյալ պարագայում՝ սնանկության վարույթում՝ պահանջի քննության շրջանակներում, այլ ոչ թե սնանկության գործի շրջանակներում որպես առանձին քաղաքացիական գործ), որի ենթակայությանը վերապահված է տվյալ գործի քննությունը»:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանի կողմից առաջարկվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու կարգավորումը մեկնաբանել Օրենքի 38-րդ հոդվածի «գ» ենթակետով նախատեսված հիմքի լույսի ներքո, որի պայմաններում դատարանները կխուսափեն պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման անհնարինության խնդրից: Հակառակ պարագայում՝ դատարանների կողմից ներկայիս օրենսդրական կարգավորումների տառացի մեկնաբանումը

պատասխանողի սնանկ ճանաչվելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքում պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու օրենսդրական հնարավորություն, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ 4(112)2023 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

կհանգեցնի անձի՝ Սահմանադրությամբ պաշտպանվող արդյունավետ դատական պաշտպանության (դատարանի մատչելիության), ինչպես նաև սեփականության իրավունքների իրացման ռեալ անհնարինության:

Մինչդեռ, իրավակիրառական պրակտիկայում ձևավորված ներկայիս ցավալի իրողությունը, այդ թվում նաև՝ առհասարակ թե՛ դատարանների, թե՛ օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ցուցանիշները՝ վկայում են այն մասին, որ դատարանները խուսափում են նորմերի լայն մեկնաբանումից, ինչը չի բացառում, որ նույնիսկ սույն գործով Սահմանադրական դատարանի դիրքորոշման առկայության պայմաններում՝ դատարանները վերստին չեն դրսևորի բավարար կամք՝ ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը համահունչ՝ «գործը ենթակա չէ դատարանում քննության» ձևակերպումը լայն մեկնաբանելուն, ինչի հետևանքով պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում հայցվորների համար կշարունակվեն ստեղծվել արհեստածին խնդիրներ՝ վճարված պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման անհնարինության տեսքով, ինչը հանգեցնում է անձանց դատարանի մատչելիության, ինչպես նաև սեփականության իրավունքների անհամաչափ միջամտության (ներկայիս իրավակիրառական պրակտիկայի մասով տե՛ս, օրինակ, թիվ ՍնԴ/0593/04/19 սնանկության և թիվ ԵԴ/0077/04/18 քաղաքացիական գործերը², թիվ ՍնԴ/0155/02/22 քաղաքացիական գործը¹):

¹ Այս մասին տե՛ս Սահմանադրական դատարանի 2022 թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումը: Հղումը ստորև՝

https://www.concourt.am/pdf/uploads/63ff2ee1631c6_SԱՐԵԿԱՆ%20ՀԱՂՈՐԴՈՒՄ-2022.pdf

² **Սույն գործերով դատարաններն արձանագրել են հետևալը.**

«Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետի՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:

Տվյալ պարագայում, գործի վարույթը կարճվում է՝ պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով, այսինքն՝ սույն գործով առկա չեն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «գ» կետով նախատեսված հիմքերը, ուստի, դատարանը գտնում է, որ դիմողի կողմից նախապես վճարված պետական տուրքի

4. Եզրակացություններ

Ինչպես արդեն իսկ նշվել է, իրավակիրառական պրակտիկայում ձևավորված ներկայիս ցավալի իրողությունը վկայում է այն մասին, որ դատարանները դեռևս պատրաստական չեն դրսևորելու բավարար կամք՝ ուղղված օրենքներում կիրառված այս կամ այն ձևակերպումը լայն մեկնաբանելուն, ուստի՝ սույն խնդրի լուծման **այլընտրանքային տարբերակներից է օրենսդրի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելը**, որի արդյունքում **Օրենքում ուղղակիորեն կամրագրվի** պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում պետական տուրքի մասնակի կամ լրիվ վերադարձման օրենսդրական հնարավորությունը: Առաջարկվող լուծումը թույլ կտա խուսափել դատարանների կողմից նորմերի ոչ միատեսակ մեկնաբանումից և կիրառումից, ուստի՝ հակասական իրավակիրառական պրակտիկա ձևավորելուց:

գումարը դիմողին վերադարձման կամ պարտապանից բռնագանձման ենթակա չէ, և պետական տուրքի հարցը դրանով իսկ պետք է համարել լուծված»:

¹ **Սույն գործով Սնանկության դատարանն արձանագրել է հետևյալը.**

«Շտևաբար, լուծելով դատական ծախսերը կողմերի միջև բաշխելու հարցը և նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. մարտի 04-ի և 2020թ. մայիսի 22-ի որոշումներով հակընդդեմ հայցադիմումների համար նախատեսված պետական տուրքի վճարումը հետաձգվել է մինչև կայացվելիք եզրափակիչ դատական ակտը, դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցվոր «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղից հոգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թ. մարտի 04-ի և 2020 թ. մայիսի 22-ի որոշումներով հետաձգված պետական տուրքի գումարը, որը կազմում է 21 281 720 ՀՀ դրամ (579 337 888,80 ՀՀ դրամ X 2% = 11 586 757,77 ՀՀ դրամ) + (937 526,65 Եվրոյին համարժեք 484 748 154,38 ՀՀ դրամ X 2% = 9 694 963,08 ՀՀ դրամ)»:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/ հատուկ թողարկում, հոդ. 1118):
2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2018 թվականի մարտի 21-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) հոդ. 373):
3. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, ՀՀՊՏ 1998.01.11/1):
4. «Սնանկության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 12-ին, ՀՀՊՏ 2007.01.31/7(531) հոդ. 139):
5. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2008 թվականի հունիսի 17-ին, ՀՀՊՏ 2008.07.23/47(637) հոդ. 776):
6. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թվականի նոյեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2001.12.15/40(172) հոդ. 958):
7. **Մարկոսյան Տ.Ա.** Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում. Գիտագործնական ձեռնարկ / ք. Երևան. Արդարադատության ակադեմիա. 2022. 464 էջ:
8. **Макаров А.А.** Право на судебную защиту // Административное и муниципальное право. 2017. № 1. - С. 69-78.
9. **Корпен А.С.** К вопросу о содержании права на доступ к правосудию // Право. Журнал Высшей школы экономики. 2016. №2. - С. 111-121.
10. **Пластинина Е.В.** Правовые аспекты понятия «Доступ к правосудию» // Марийский юридический вестник. 2013. №10. - С. 182-186.
11. **Groves M., Weeks G.** Legitimate expectations in the Common law world. Oxford and Portland, Oregon. Hart publishing. 2016. Hart studies in comparative public law, V. 12.

НЕВОЗМОЖНОСТЬ ВОЗВРАТА ГОСУДАРСТВЕННОЙ ПОШЛИНЫ В СЛУЧАЕ ПРЕКРАЩЕНИЯ ПРОИЗВОДСТВА ПО ГРАЖДАНСКОМУ ДЕЛУ НА ОСНОВАНИИ ПРИЗНАНИЯ ОТВЕТЧИКА БАНКРОТОМ

Аннотация

В настоящей работе рассматривается проблема невозможности возврата государственной пошлины в случае прекращения производства по гражданскому делу на основании признания ответчика банкротом в силу нынешних законодательных регулирований в Республике Армения в свете права на доступ к правосудию, являющегося элементом права на эффективную судебную защиту, и права собственности.

Целью настоящего исследования является установление в результате комплексного изучения действующих правовых регулирований правовых оснований, которые позволят суду в случае прекращения производства по гражданскому делу на основании признания ответчика банкротом частично или полностью вернуть истцу уже уплаченную государственную пошлину, а в случае невыплаты - решить настоящий вопрос.

В результате исследования авторы затрагивают такие вопросы, как соотношение права на доступ к правосудию и института взимания государственной пошлины, цели взимания государственной пошлины, вопрос возврата государственной пошлины в свете права собственности, а также вопрос распределения судебных расходов в свете особенностей производства по банкротству.

Ключевые слова: государственная пошлина, производство по банкротству, право собственности, доступ к правосудию, возврат государственной пошлины.

IMPOSSIBILITY OF REFUND OF THE STATE FEE IN CASE OF TERMINATION OF CIVIL PROCEEDINGS ON THE BASIS OF RECOGNITION OF THE DEFENDANT AS BANKRUPT

Annotation

This article examines the problem of the impossibility of returning the state fee in the event of termination of the proceedings on the basis of the recognition of the defendant as bankrupt due to the current legislative regulations in the Republic of Armenia in the light of the right to access to court, which is an element of the right to effective judicial protection, and right to property (protection of property).

The purpose of this study is to establish, as a result of a comprehensive study of the current legal regulations, the legal grounds that will allow the court, in the event of termination of proceedings in a civil case on the basis of recognition of the defendant as bankrupt, to partially or completely return to the plaintiff the state fee already paid, and in case of non-payment, to resolve this issue.

As a result of the research, the authors discuss such issues as the ratio of the right to access to court and the institution of state fee collection, the purpose of state fee collection, the issue of refund of state fee in the light of property rights, as well as the issue of distribution of court costs in the light of the specifics of bankruptcy proceedings.

Keywords: state fee, bankruptcy proceedings, protection of property, access to court, refund of state fee.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 10.10.2023 թ., տրվել է գրախոսության 11.10.2023 թ., ընդունվել է տպագրության 13.10.2023 թ.: